

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը



Սույն թվականի փետրվարի 13-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի հանձնման արարողությունը:

«Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակը տրվում է աշխարհի ականավոր գիտնականներին աստղաֆիզիկայի և նրան հարակից ֆիզիկայի և մաթեմատիկայի ասպարեզում ստացված կարևորագույն գիտական արդյունքների համար՝ երկու տարին մեկ անգամ: Մրցանակը նպատակ ունի հավերժացնելու Վիկտոր Համբարձումյանի հիշատակը, աշխարհին ներկայացնելու Հայաստանի գիտությունը և նպաստելու աստղաֆիզիկայի զարգացմանը Հայաստանում:

Մինչև 2018 թ. ապրիլ ամիսը ստացվել էին 14 տարբեր առաջարկ-ներկայացում գիտությունների ակադեմիաների և այլ խոշոր գիտական կենտրոնների կողմից:

Միջազգային հանձնաժողովը որոշել է մրցանակը հանձնել հետևյալ գիտնականների խմբին. պրոֆեսոր Էդվարդ ՎԱՆ ԴԵՆ ՀՈՅՎԵԼ (Ամստերդամի

համալսարանի Ամստերդամի Դեպարտմենտի անվան աստղագիտության ինստիտուտ, Նիդերլանդներ), պրոֆեսոր Ալեքսանդր ՏՈՒՏՈՒԿՈՎ (ՌԴ ԳԱ աստղագիտության ինստիտուտ, Մոսկվա, ՌԴ), պրոֆեսոր ԼԼ ՅՈՒՆԳԵԼՍՈՆ (ՌԴ ԳԱ աստղագիտության ինստիտուտ, Մոսկվա, ՌԴ) գիտական խմբին: Խումբն առաջադրվել է Ամստերդամի համալսարանի Ամստերդամի Դեպարտմենտի անվան աստղագիտության ինստիտուտի և միաժամանակ Մոսկվայի ՌԴ ԳԱ աստղագիտության ինստիտուտի կողմից «Ձանգվածեղ կրկնակի աստղերի, հատկապես ռելատիվիստական կրկնակիների և գրավիտացիոն ալիքների աղբյուրների ձևավորման ոլորտում առաջնային ուսումնասիրությունների համար», - իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Հաղթողներին շնորհավորեց և մրցանակը հանձնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Վերջերս ռուսական մի մամուլում կարդացի այսպիսի մի հրապարակում, որը Վիկտոր Համբարձումյանի անվան մրցանակն անվանել էր աստղաֆիզիկայի բնագավառում Նոբելյան մրցանակ: Կարծում եմ, որ

սա շատ կարևոր և դիպուկ բնորոշում է:

Վիկտոր Համբարձումյանն իսկական գիտության նվիրյալ էր: Նրա հանձնարին գումարվում էր նրա անսպառ աշխատասիրությունը, և այդ երկուսի ներդաշնակ համակցության շնորհիվ էր, որ նրա կողմից ստեղծած Բյուրականի աստղադիտարանի փառքը կարճ ժամանակում տարածվեց ողջ աշխարհում, իսկ Հայաստանում կտրուկ վերելք ապրեցին աստղաֆիզիկան և ճշգրիտ գիտություններն ընդհանրապես:

Շատերը հարցնում են, թե այդ ինչպես է, որ փոքրիկ երկիր Հայաստանը սահմանել է այսպիսի խոշոր գիտական մրցանակ: Լինելով նորանկախ պետություն՝ Հայաստանը ամենադժվարին տարիներին էլ, ներկայումս էլ, շարունակում է կարևորել գիտության զարգացումը, շարունակում է իր տեղն ունենալ առաջատար երկրների թվում: Այս ամենի հետ մեկտեղ մենք հասկանում ենք, որ դեռևս շատ անելիքներ կան մեր երկրում գիտնականի արդյունավետ աշխատանքն ու արժանավայել կյանքն ապահովելու ուղղությամբ, գիտա-

կան հիմնարկները ժամանակակից սարքավորումներով հագեցնելու, երիտասարդ կադրերի ներհոսքն ապահովելու, ընդհանրապես գիտության զարգացման ուղղությամբ: Որպես երկրի ղեկավար, պիտի փորձեմ բոլոր ջանքերս ներդնել գիտության և գիտության մշակների նկատմամբ հարգանքն ու զնահատանքը բարձրացնելու համար: Որպես օրինակ կարելի է նշել, որ մրցանակի նկատմամբ վստահությունն ավելացնելու նպատակով այս տարվանից ՀՀ կառավարության որոշմամբ մրցանակի բոլոր ծախսերը ներառվել են ՀՀ պետական բյուջեի մեջ»:

«Մեծ պատիվ է այստեղ ստանալ աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանի անվան մրցանակը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանի կառավարությանն այս հիմնադրված մրցանակը ստանալու պատվին մեզ արժանացնելու համար», - իր ելույթում ասաց պրոֆեսոր Էդվարդ Վան Դեն Հոյվելը:

«Հուսով եմ, որ այս միջազգային մրցանակը, որը տրված է մեր թիմին, կծառայի Հայաստանի և Ռուսաստանի աստղագետների և ողջ աշխարհի գիտական համրույթի հաջող գիտական համագործակցությանը», - իր ելույթում ասաց պրոֆեսոր Լև Յունգելսոնը:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակը կազմում է 300,000 ԱՄՆ դոլար: Մրցանակից 100,000 ԱՄՆ դոլարի չափով միջոցները հաջորդող երկու տարիների ընթացքում օգտագործվելու են Հայաստանի Հանրապետությունում աստղաֆիզիկայի, ինչպես նաև դրան հարակից ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառների հետազոտության համար:

Վիկտոր Համբարձումյանի անվան միջազգային գիտական մրցանակի միջազգային հանձնաժողովի նախագահն է պաշտոնե ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն է: Հանձնաժողովի անդամներն են աշխարհի հանրահայտ գիտնականներ, Նոբելյան մրցանակակիր պրոֆեսոր Բրայան Շմիդտը (Ավստրալիա), պրոֆեսոր Էրվանդ Թերոյանը և պրոֆեսոր Վահե Պետրոսյանը (ԱՄՆ), Միջազգային աստղագիտական միության նախագահ պրոֆեսոր Նորիո Կայիում (Ճապոնիա), պրոֆեսոր Ջոզեֆ Սիլբը (Միացյալ Թագավորություն), Միջազգային աստղագիտական միության նախագահ պրոֆեսոր Կատրին Ցեսարսկին (Ֆրանսիա), պրոֆեսոր Միշել Մայորը (Շվեյցարիա) և պրոֆեսոր Անատոլի Չերեպաշչուկը (Ռուսաստան):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐԵՎ ԱՅՐ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - ԿՈՄԻՏԱՍ



ՀՀ ԳԱՍ-ում անցկացվեց համաժողով՝ նվիրված հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին

Սույն թվականի փետրվարի 18-ին ՀՀ ԳԱՍ նախագահությունում տեղի ունեցավ Թումանյանագիտության արդի հիմնախնդիրները թեմայով համաժողովը՝ նվիրված մեծանուն գրող, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱՍ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Իր ելույթում նա մեջ բերեց Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Թումանյանն ասել է. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ՝ գիտության օջախ, հայկական ակադեմիա»: Նա երազում էր ունենալ համալսարան մեր կրթության համակարգում: Առաջին համալսարանի տնօրենը ղեկավարները կարողացան համալսարանի նրա ցանկությունն իրականացնել. 1919թ-ին հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, որի 100-ամյակը պետք է այս տարի նշենք, բայց, գիտությունների ազգային ակադեմիան չհաջողվեց այդ ժամանակ կազմակերպել, այն կազմակերպվեց ավելի ուշ», - ասաց ՀՀ ԳԱՍ նախագահը:

Ներկաներին ողջունեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: «Պատահական չէ, որ շատ գիտնականներ, հասարակական գործիչներ Թումանյանին համարում են ամենահզորներից մեկը, ով ազգի ձևավորման մեջ շատ մեծ դերակատարում է ունեցել: Երբ կարդում ես նրա հրապարակախոսական նյութերը, կարծես մի քանի օր առաջ է գրել դրանք: Բացի այն, որ գրել է, խնդիրը վերհանել, նաև լուծումներ է առաջարկել», - ասաց նախարարը: Արայիկ Հարությունյանը, հանդիսանալով նաև Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանի առիթով ստեղծված կառավարական հանձնաժողովի նախագահ, հայտարարեց, որ պետությունը նպատակ ունի Թումանյանի հոբելյանին նվիրված միջոցառումները վերածել համազգային տոնախմբության:

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության, գրական-հասարակական գործունեության վերաբերյալ ելույթներով հանդես եկան ՀՀ գիտաուսումնական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին ՀՀ ԳԱՍ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից վերջին մեկ տարում հրատարակված Հովհաննես Թումանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված գիտական աշխատություններից:

ՀՀ ԳԱՍ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հազար ութ հարյուր վաթսուհին թվին Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին. Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,- Դժվար է ասել:

Սակայն այդ թվին Մայր Հայաստանի Արգանդը եղավ սրբորեն բեղուն: Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում... Նա հետո պիտի դառնա պատանի, Եվ երիտասարդ, և այդ իմաստուն, Անբախտ Մարոյին լացով սպանի, Մեր հառաչանքը հասցնի Աստծուն: Մրմուռից դաղված նրա բերանով Սարոյի մանը պիտի ողբ ասի, Մսրա զորքի հետ Դավիթը խոսի, Գիքորը կանչի. «Եստի՜ համեցեք...»: Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել Իր մոխրակալած-հրակեզ հոգին Եվ՝ որքան տրտում-նույնքան կենսագին՝ Տարիներ հետո նա պիտի դառնա Մի ժողովրդի ազնիվ կենագիր...



Միևնույն թվին, Լոռուց շատ հեռու՝ Անատոլուի խավար խորքերում Մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ: Երևի այդօր Եթե ոչ մարդկանց, Գեթ ամենալուր և ամենազոր բնության համար Տոն էր անսովոր. Չէ որ նա գիտեր, թե ում է ծնել, Լուսն էր չէ որ, Թե ինչ նվազներ և ինչ անհամար, Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում Այդ երկու թխլիկ նորածինների Դեռ ոչինչ չասող առաջին ճիչում...

Դո՛ւ - Վարդապե՛տ:

Դու ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես, Դու՝ մեր Երգի Մեսրոպ Մաշտոց, Գիրն ու տառն ես Հայոց Երգի: Հայոց Երգի Անժիր հերկի Եվ ակոսն ու խորունկ առն ես, Եվ մատընտիր սերմը նրա, Եվ խոստումը գալիք բերքի...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝ Վստահելի թիկունքն ես մեր, Մեր երգերի Ծովասարը Ու բյուրական ակունքն ես մեր, Մեր արնոտված հավքի լեզուն, Մեր կարոտած ֆիդան յարը, Մեր Լեփլեցուն հոգիների ծայնատարը, Մեր երգերի խա՛ղը - նոտա՛ն - ձայնատա՛ռը, Ձայնասփյո՛ւռը կենդանի Ու ձայների թանգարա՛նը.- Մեր հայկական երգարա՛նը... Եվ մեզանից արդ ընդունիր



Երախտիքի այս խաչքա՛ռը, Այս խաչքուռը՝ քո՛ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ՝ մեր Երգի Մշտահնչուն նվագարան. Ընդունիր դո՛ւ՝ մեր ցաքուցիր Մասունքների հավաքարա՛ր, Դու՝ խազերի մեր քերական, Դու՝ հոգևոր մեր շարական. Դու՝ սրբազան մի ավազան, Որ մեր հոգին ախտահանեց. Դու՝ բիբլիական մի գավազան. Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց, Դու մեր կարոտ ու մեր մորմոք, Մեր տաղի քուրմ, Մեր խաղի մոգ, Մեր մշտահունչ ու մշտաթթուն, Անլռելի զանգակատո՛ւն...





ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սիյուռքի բաժինը

Մաթեմատիկոս, պրոֆեսոր, ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ Վիկտոր Փամբուկյանը (Բանալուքեան) ծնվել է 1959 թ. օգոստոսի 12-ին Ռուսիայում, Կոմունիստական (Բրաշնով) քաղաքում: Հաճախել է գերմանական դպրոց: Փամբուկյանի մայրը՝ Սոնան անգլերեն լեզվի մասնագետ էր, միևնույն ժամանակ փայլուն տիրապետում էր գերմաներենին, տանը երեխաների հետ խոսում էր գերմաներենով, որպեսզի դպրոցում դժվարություններ չունենային:

Վիկտոր Փամբուկյանի հայրը՝ Գրիգոր Փամբուկյանը՝ 1915 թ. Ադանայից մազապուրծ եղածների շարքում էր: Հետագայում ստանալով լավ կրթություն՝ մասնագիտացել էր բժշկության ոլորտում, պրոֆեսոր էր: Իր կատարած աշխատանքների համար 1978 թ. Վազգեն Վեհափառից ստացել էր Ներսես Շնորհալի կոչում:

Յոթերորդ դասարանում Վիկտորը ակնհայտորեն մեծ հետաքրքրություն ուներ մաթեմատիկայի նկատմամբ, թեև մտածում էր, թե հոր նման բժիշկ պետք է դառնա: Մաթեմատիկայի մեջ Փամբուկյանին դուր էր գալիս ազատությունը: Նա կարծում էր, որ կարող է աշխարհից



մաթեմատիկայի պատմություն և փիլիսոփայություն առարկաներ: Այսօր Փամբուկյանը Արիզոնայի պետական համալսարանի մաթեմատիկայի և բնական գիտությունների դպրոցում դասավանդում է համրահաշիվ, մաթեմատիկա, երկրաչափություն, թվերի տեսություն և այլն:

Վ. Փամբուկյանը 120-ից ավելի հոդվածների հեղինակ է և մի շարք գրքերում ունի բաժիններ:

1999 թ. Փամբուկյանը սկսել է համագործակցել Հայ բարեգործական ընդհանուր միության հետ, որն ուներ «Մասնագիտական փորձառությունը Հայաստանում» ծրագիր: Այդ շրջանակներում էլ 2 ամիս մնացել է Հայաստանում և իր գիտելիքներով կիսվել ուրուտի մասնագետների և ուսանողների հետ: Այդ ընթացքում Վիկտոր Փամբուկյանն ու նրա ընկերները որոշեցին կարևորել մաթեմատիկայի տեղն ու դերը երիտասարդների համար: 2001 թ. ստեղծեցին Եմիլ Արթինի անվան երիտասարդ գիտնականների ամենամյա մրցանակը, որը տրվում է Հայաստանի երիտասարդ այն մաթեմատիկոսներին, ովքեր նշանակալի գիտական գործունեություն են ծավալել: Այդ ժամանակից ի վեր մրցանակը ստացել են 14 երիտասարդ մաթեմատիկոսներ, նրանց մեծ մասը այժմ էլ զբաղվում են մաթեմատիկայով և ուրուտի լավագույն մասնագետներից են: Թեպետ համագործակցությունը Հայաստանի մաթեմատիկական կենտրոնների հետ մինչ այժմ այնքան էլ արդյունավետ չի եղել, նա կարծում է, որ հետայսու կշտկվի: Անցած տարիների ընթացքում նա իր անձնական միջոցների հաշվին 30 հազար կտոր գիրք է նվիրել ԵՊՀ-ի գրադարանին:

Վ. Փամբուկյանը հրավիրված դասախոսությունների շարք է ունեցել Դորդմուտի համալսարանում, մասնակցել է բազմաթիվ գիտական կոնֆերանսների:

2018 թ. վեց ամսով Փամբուկյանը ժամանեց Հայաստան և զեկուցումների շարքով հանդես եկավ ԵՊՀ-ի մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանողների համար և իրականացրեց համատեղ հետազոտություններ:

Հաշվի առնելով Վիկտոր Փամբուկյանի գիտական և մանկավարժական մեծ ավանդը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2011 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ: Վիկտոր Փամբուկյանը այսօր ևս մեծ ջանքեր է ներդնում մաթեմատիկայի զարգացման գործին և համագործակցում է Հայաստանի գիտական ինստիտուտների հետ:

Գոհար ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱՍ սիյուռքի բաժնի գիտքարտուղար

Վիկտոր ՓԱՄԲՈՒԿՅԱՆ

կտրվել այդպես և խորասուզվել միայն մաթեմատիկայի աշխարհում՝ հեռու մնալով հասարակությունից: Նրա որոշմանը նպաստեց նաև դպրոցի մաթեմատիկայի լավագույն ուսուցիչը՝ Շոտեֆան Կլայքը: 6-րդ դասարանում Փամբուկյանը լուծեց իր առաջին խնդիրը՝ «Մաթեմատիկան հանդես» ամսագրում, իսկ 9-րդ դասարանում արդեն արժանացավ առաջին մրցանակի, քանի որ լուծել էր «Մաթեմատիկան հանդես»-ի թե՛ դպրոցական, թե՛ օլիմպիադայի բոլոր խնդիրները: Փամբուկյանի ողջ աշխարհը դա մաթեմատիկան էր և և խնդիրների լուծումից ու ընթերցանությունից զատ նրան ոչինչ չէր հետաքրքրում:

1960-ականների կեսերին արդեն ընտանիքում բնակարան էին Միացյալ Նահանգներ տեղափոխվելու հարցը, սկայն դա հեշտ գործընթաց չէր Սոցիալիստական Ռուսիայի համար: 1978 թ. Վիկտորը ընդունվում է Բուխարեստի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետը, որտեղ բարձր առաջադիմությամբ սովորում է չորս տարի: Ավարտելուց հետո Փամբուկյանն ընդունվեց աշխատանքի Բուխարեստից դուրս մի դպրոցում: Միևնույն ժամանակ նա պատրաստում էր թղթերը Միացյալ Նահանգներ մեկնելու համար: Հենց

դրա համար նրան ազատեցին աշխատանքից, քանի որ, ըստ իշխող գաղափարախոսության, նրա օրինակը կարող էր վատ ծառայել երեխաների համար: Ի դեպ, դա վերաբերվում էր բոլոր ուսուցիչներին, ովքեր որոշում էին հեռանալ երկրից: Եվ այսպես շուրջ վեց տարի Փամբուկյանը սպասեց իր թղթերին և ի վերջո 1988 թ. Փամբուկյանն ու նրա կինը ստացան Միացյալ Նահանգներ մեկնելու իրավունք:

1988 թ. Միացյալ Նահանգներում ընդունվեց մասնավոր դպրոց, որպես ֆրանսերենի և մաթեմատիկայի ուսուցիչ:

1989 թ. Վիկտորն աշխատանքի ընդունվեց Միչիգանի համալսարան՝ դոկտորական հետազոտություն կատարելու համար:

1993 թ. Անդրեաս Բլասի (Andreas Blass) ղեկավարությամբ Վիկտոր Փամբուկյանը պաշտպանեց «Էվկլիդեսի երկրաչափության աքսիոմատիկա» թեմայով ատենախոսությունը: Հաջողությամբ պաշտպանելուց հետո Փամբուկյանը աշխատանքի ընդունվեց Միչիգանի համալսարանում: 1993 թ. աշխատանքի հրավեր ստացավ Արիզոնայի համալսարանի ինտեգրատիվ ուսումնասիրությունների ամբիոնից՝ դասավանդելու մաթեմատիկա,

Բազմալատարակ գիտնական Աշոտ Ասլանյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով ՀՀ ԳԱՍ-ում

Սույն թվականի փետրվարի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց բազմալատարակ գիտնական, երկրաբան, պետական գործիչ, ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս Աշոտ Ասլանյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱՍ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և կարևորեց Աշոտ Ասլանյանի մեծ գիտական ուղին և պատվավոր տեղը հայրենական գիտության երախտավորների շարքում:

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ Ռաֆայել Մելքոնյանը ներկայացրեց Աշոտ Ասլանյանի մեծ գիտական ուղին և պատվավոր տեղը հայրենական գիտության երախտավորների շարքում:

Աշոտ Ասլանյանը 1941 թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և մեկնել ռազմաճակատ, 1941-1943 թթ.-ին մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Ծանր վիրավորվելուց հետո զորացրվել է բանակից: Նա զբաղեցրել է բարձր պաշտոններ՝ 1965-1966 թթ.-ին եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, 1966-1975 թթ.-ին՝ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, 1975-1987 թթ.-ին՝ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն: 1965-ին նա ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի



թղթակից անդամ, 1986 թ.-ին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:

Նրա ղեկավարության տարիներին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում կազմակերպվեց լեռնամետալուրգիական ֆակուլտետ, սեյսմատեկտոնիկայի պրոբլեմային լաբորատորիա: Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարի պաշտոնը զբաղեցնելիս նա մեծ ավանդ է ունեցել բարձրագույն դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, ԲՈՒՀ-երում գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման, մի շարք նոր ֆակուլտետների, ամբիոնների և լաբորատորիաների կազմակերպման գործում:

«Աշոտ Ասլանյանը բազմակողմանի գիտնական էր և վստահորեն կարելի է ասել, որ նա բացառիկ երևույթ էր հայրենական երկրաբանությունում», - նշեց Ռաֆայել Մելքոնյանը:

Չափազանց կարևոր էին Աշոտ Ասլանյանի տեսական աշխատանքները, որոնք զտնվում էին մեծ երկրաֆիզիկայի և մոլորակագիտության սահմանագծում: Այդ աշխատանքներում տրվեցին

լիթոսֆերայի ֆիզիկամեխանիկական բնութագրերի քանակական գնահատականները երկրի միջուկի, կեղևի խտության, մասսայի, ձևի, ծավալի և միջին տեսակարար կշռի էվոլյուցիայի հաշվարկային որոշումները նրա գոյության 4.5 միլիարդ տարիների ընթացքում:

Աշոտ Ասլանյանը Նյու Յորքի ակադեմիայի անդամ էր, երկու անգամ զբաղեցրել է մոլորակագետների Միջազգային ասոցիացիայի փոխարեգիդենտի պաշտոնը, եղել է ԽՍՀՄ ԳԱ Անդրկովկասի չորրորդական ժամանակաշրջանի ուսումնասիրության հանձնաժողովի նախագահ:

Ակադեմիկոս Ասլանյանն արժանացել է բարձր պետական պարգևների՝ Հայրենական մեծ պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի երեք շքանշան, Ժողովուրդների բարեկամության շքանշան: Նա պարգևատրվել է Գերմանիայի Միներալոգիական ընկերության Աբրահամ Վերների անվան մեդալով, ԽՍՀՄ Աշխարհագրական ընկերության Սեմյոնով-Տյան-Շանսկու անվան մեդալով:

«Աշոտ Ասլանյանը կյանքից հեռացավ 1989 թ.-ին՝ աշխարհին թողնելով իր գիտական հարուստ ժառանգությունը», - նշեց Ռաֆայել Մելքոնյանը:

ՀՀ ԳԱՍ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հայ-իտալական գիտական կապերն ամրապնդվում են



Հունվարի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նախագահությունում տեղի ունեցավ հանդիպում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների և Հայաստանում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյի և Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուլչոյի գլխավորած պատվիրակության հետ:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գործունեությունը, գիտական հետազոտությունների ուղղությունները, ծեռքերումները և խնդիրները: «Մենք փորձում ենք ամեն ինչ անել, որպեսզի ներգրավենք երիտասարդությանը գիտության մեջ: Այժմ մեր գիտական կադրերի 30 տոկոսը երիտասարդներն են: Մենք ջանում ենք զարգացնել և ուժեղացնել մեր միջազգա-

յին կապերը՝ միջազգային գիտահետազոտական ծրագրերում ներգրավելով երիտասարդ գիտնականներին»,- ասաց Ռադիկ Մարտիրոսյանը:

Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուլչոն իր հերթին ներկայացրեց Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի գործունեությունը և նշեց, որ երիտասարդ գիտնականների համար ցանկալի է ունենալ առանձին ծրագրեր: Նա ասաց, որ համատեղ իրականացվելիք ծրագրերը կարող են հետազայում ընդլայնվել: Մասիմո Ինգուլչոն շնորհակալություն հայտնեց ջերմ հյուընկալության համար և հայ գիտնականներին հրավիրեց Իտալիա՝ տեղում ծանոթանալու Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի գործունեությանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Գիտաժողով նվիրված հայ-իտալական գիտական կապերի զարգացմանը



Հունվարի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված հայ-իտալական գիտական կապերի զարգացմանը:

Գիտաժողովին ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուլչոն:

«Լավ է, որ Հայաստանի և Իտալիայի գիտնականները համագործակցության ճանապարհին են ընտրել և վստահեցնում են, որ նախագահական ինստիտուտն ամեն ինչ կանի, որ այդ համագործակցությունը խորանա»,- իր ելույթում ասաց ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ արդեն իսկ ստորագրվել է գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում հայ-իտալական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիրը, որի շրջանակներում կանխապայման երկու երկրների գիտնականների կապերը, կիրականացվեն համատեղ ծրագրեր: Համագործակցության հիմնական ոլորտներն են՝ ֆիզիկական և աստղաֆիզիկական, քիմիան, մոլեկուլային կենսաբանու-

յունը, գյուղատնտեսական գիտություններ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, հնագիտություն և արվեստագիտություն:

Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր Մասիմո Ինգուլչոն իր ողջույնի խոսքում նշեց, որ հայ-իտալական գիտական համագործակցության հիմքում ընկած է ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի այցը Իտալիա, որի շրջանակներում նախագահը հանդիպել է իտալացի գիտնականների հետ:

Գիտաժողովին «Համաշխարհային ռիսկերի քվանտային վարքագիծը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը: Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի նախագահ պրոֆեսոր Մասիմո Ինգուլչոն ներկայացրեց «Հեղափոխության իրականացումը քվանտային տեխնոլոգիաներում հանուն մարդկության և Մոլորակի» զեկուցումը: Ընդհանուր ներկայացվեց 9 զեկուցում ՀՀ ԳԱԱ-ի կառույցների, Իտալիայի ազգային հետազոտական խորհրդի, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի, «Զենուլ» ինստիտուտի, Իտալիայի օպտիկայի ազգային ինստիտուտի ներկայացուցիչների կողմից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հունվարի 28-ին, 90-ամյա տարիքում վախճանվել է ակադեմիկոս Բաճազետ, հայագետ-արևելագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: Ծնվել է 1928 թ. Ժամանակակից Աշոցքի տարածաշրջանի (նախկին՝ Ղուկասյանի շրջան) Ղազանչի գյուղում՝ ծագումով ալաշկերտցի և մշեցի ծնողների ընտանիքում:

1947 թ. Թբիլիսիում ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Ս. Հարությունյանն ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու և գրականություն: 1952 թ. ավարտական թեզ է գրում «Պարսկերենի տարրերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում» թեմայով, որի հավելվածը միայն կազմում էր 500 էջ: 1956 թվականից՝ ասպիրանտական ուսումնառության շրջանից սկսած, Ս. Հարությունյանի գիտական գործունեությունն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, իսկ 1960 թ. նա փոխադրվել է նորաստեղծ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ուր աշխատում էր մինչև իր մահը:

1959 թ. Ս. Հարությունյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով, 1971 թ.՝ դոկտորական ատենախոսություն՝ «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» թեմայով: 1992-2007 թթ. Ս. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ գիտական գծով փոխնախագահ էր, 2000 թվականից՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Մինչև իր մահը ղեկավարել է նույն ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժինը:

Ս. Հարությունյանի բազմամյա հետազոտական աշխատանքը նշանավորվեց մի շարք կոթողային մենագրություններով, որոնք դեռ երկար տարիներ կլինեն յուրաքանչյուր բանագետի, լեզվաբանի, մշակութաբանի և լայն առումով հայագետի սեղանի գրքեր (ինչպես, օրինակ՝ «Հայ ժողովրդական հանելուկներ», 1960 և 1965, «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ», 1975, «Հայ հին վիպաշխարհը», 1987, «Հայ առասպելաբանություն», Բեյրութում, 2000, «Հայ հմայական և ժողովրդական աղթքներ», 2006, և այլն):

1971-1973 թթ. Ս. Հարությունյանի գլխավորած գիտական արշավախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրերից գրառել է «Սասնա ծռեր» հերոսավեպի 81 նոր պատում, որոնց մի մասը հրատարակվեց «Սասնա ծռեր» Գ (1979 թ.) և Դ (1999 թ.) հատորներով: Ս. Հարությունյանի գործուն մասնակցությամբ են կյանքի կոչվել «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» վերտառությամբ միջազգային շարունակական գիտաժողովները (2003-2017):

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքին զուգահեռ Ս. Հարությունյանը երկար տարիներ գլխավորել է «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհուրդը (2006-2018), դասավանդել է ԵՊՀ-ում և Հայաստանի այլ բուհերում, բազմիցս եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում: Նրա ղեկավարությամբ են պաշտպանել իրենց թեզերը մոտ 20 գիտության թեկնածուներ և դոկտորներ:

Վաստակաշատ գիտնականի, մանկավարժի, քաղաքացու հիշատակը միշտ վառ կմնա նրան ծանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՄԻԼՎԱ ԿԱԿՈՒՏԻԿՅԱՆ-100

Այս գարնան հետ, այս ծաղկունքի, Այս թռչնակի, այս առվակի, Հետն այս երգի ու զարթոնքի Բացվեց լեզուն իմ մանկիկի: Ու թոթովեց բառ մի անգին Հայկյան լեզվից մեր սրբազան, Ասես մասունք հաղորդության Դիպավ մանկանս շրթունքին...



ԽՈՍՔ ԻՄ ՈՐՈՒՆ

- Լսիր, որդիս, պատգամ որպես Սիրող քո մոր խոսքը սրտանց, Այսօրվանից հանձնում եմ քեզ Հայոց լեզուն հազարազանծ:

Կտրել է նա, հանց աստղալույս, Երկինքները ժամանակի, Շառաչել է խռովահույզ Սլացքի հետ հայկյան նետի,

Ու Մետրոպի սուրբ հանճարով Դարծել է գիր ու մագաղաթ, Դարծել է հո՛ւյս, դարծել դրո՛շ, Պահել երթը մեր անաղարտ... Նրանով է մըմընջացել Հայ պանդուխտը վերքն իր սրտի, Նրանով է որորտացել

Կռվի երգն իմ ժողովրդի, Նրանով է մայրս ջահել Ինձ օրորոց դրել մի օր, Հիմա եկել, քե՛զ է հասել Նրա կարկաչը դարավոր... Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն, Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն, Թող մանկանա՛ քո շուրթերին Մեր ալեհե՛ր հայոց լեզուն... Պահիր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ծյունի պես, Պահիր նրան սրտիդ մոտիկ, Քո պապերի աճյունի պես, Ու ոսոխի զարկիցը սև Դու պաշտպանիր կրծքով նրան, Ինչպես մո՛րդ կպաշտպանես, Թե սո՛ւր քաշեն մորդ վրան, Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս, Թե մո՛րդ անգամ մտքիցդ հանես, Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:

ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՇԻՆ ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԶՈՐԱԿԱՐԻ ՄԱՍԻՆ . . .



Սիլվա Կապուտիկյանը զորավարի մասին առաջին գրառումներն արել է 1964 թվականին Երևանում հրատարակված «Քարավանները դեռ քայլում են» գրքում: Այն ժամանակ բանաստեղծուհին, ավարտելով իր բեյրության ուղևորությունը, ընդամենը երկու օրով կանգ է առել Փարիզում և այցելել Պեր Լաշեզ գերեզմանատանը գտնվող զորավարի շիրմին: Ըստ բանաստեղծուհու՝ տպավորիչ էր Պեր Լաշեզի հանրահայտ գերեզմանատունը իր բազմազան, խորախորհուրդ շիրմաքարերով, որոնց տակ հանգչում էին Ֆրանսիայի նշանավոր զավակները: Ընդհանուր մի հայացքով անցնելով այս բոլորի մոտից՝ բանաստեղծուհին երկար կանգնում է ուրիշ մահարձանների մեջ խճողված մի շիրմի առաջ. «Գրանիտե պատվանդան, գրանիտե ձի՛ վրան հայկական արծվաքթով, երկար բեղերով ու բարձր փափախով հեծյալը: Չորավար Անդրանիկն էր...»:

Բանաստեղծուհին համոզված պնդում է, որ այդ արձանը ամենևին չէր համապատասխանում բոլոր ժամանակների հայ մեծանուն զորավարի ոգու և բազկի սխրանքի վեհությանն ու վիթխարիությանը. «Փոքրիկ, շվարած, անարյուն մի ձի է: Հեծյալը, թերևս արտաքնապես նման, սակայն չունի իր մեջ հրեղեն այն խորհուրդը, որ «Անդրանիկ» ասելիս վրձնում, բաշերը թափ է տալիս ամեն հայի հոգում և Սասնա ծռույգի պես դուրս է

սուրում քարանձավից»: Ըստ բանաստեղծուհու ներքին համոզմունքի՝ զորավարի փարիզյան արձանը իր հույժ իրապաշտական ձևերով, հնաժող ու միամիտ կատարմամբ չի ներդաշնակում շրջապատի երևակայությամբ ու գյուտերով հարուստ հուշարձաններին: Սակայն դա չէր ամենակարևորը: Այլ այն հարցադրումը, թե զորավար Անդրանիկի՝ Փարիզում, օտար գերեզմանատանը հանգչելու սույն իրողությունը ներդաշնակվո՞ւմ է արդյոք պատմության և արդարության հետ:

Սա ճշմարիտ ու ժամանակի համեմատ շատ համարձակ հարցադրում էր: Քանզի այդ տարիներին զորավար Անդրանիկի անունը դեռևս գտնվում էր յոթ փականքի ներքո, և հետո միայն աստիճանաբար այդ փականքները բացվեցին: Եվ տասը տարի անց՝ 1974 թ., բանաստեղծուհին այցելեց ամերիկահայ գաղթօջախ, ուղևորվեց զորավարի նվիրական ուսնահետքերով և վերոնշյալ տպավորություններով լցված իր զգայացունց խոհերն արձանագրեց «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» սովորածավալ հատորում:

Բանաստեղծուհու հոգեկան աշխարհում այսպես վեր հառնեց զորավարի կերպարը. «Անդրանիկ՛ կը, մորից Անդրանիկը... Թողած իր պաշտելի Հայաստանը, նրա անխորհուրդ վարիչներից խռոված, նա թափառեց աշխարհում վիրավոր ու հիասթափ, որպես մի Լիր արքա... Այստեղ՝ Ամերիկայում, հեռու, իր հետ կապ չունեցող աշխարհում է վերջ ի վերջո հանգրվանել այդ անհանգիստ հոգին, մինչ հեռվում իր Հայաստանն էր, իր ժողովուրդը, որի փրկության համար տվել էր ամեն ինչ՝ սիրտ, երազ, երիտասարդություն, կռվել ու կռվի էր տարել իր քաջերին, նետվել դեպի մահ, հաղթանակել, պարտվել, այրվել ու ընդվզել: Եվ այդ բոլորից հետո՝ այս Կալիֆոռնիան, այս հաշտ ու առտնին ազարակները, այս քաղթենի հանգստավետությունը: Այնպես անհարիր էր այս ամենին ինքը, իր էությունը, իր գոռ ասպազները»:

Եվ միայն Սիլվա Կապուտիկյան բանաստեղծուհու զգայուն հոգին կարող էր նկատել և արձանագրել, որ Ամենայն հայոց զորավարը մեռավ ոչ միայն Հայաստանից, այլև իր «տնից էլ, Ֆրեզնոյից ու նրա հայությունից էլ հեռու... իր կնոջ՝ Նվարդի սիրող ու հուսահատ հայացքի

տակ: Եվ սակայն հուղարկավորությունը եղավ իրավիճակի համաժողովրդական»:

Հեռակա երկխոսություն սկսելով զորավարի հետ, խոսելով ոչ միայն իր, այլև հայ սերունդների անունից՝ բանաստեղծուհին մտորում է այն բանի շուրջ, որ եթե իմանար փարիզյան «խաղաղիկ շիրմատանը մնող մեծ Չորավարի հոգին, եթե իմանային մեր ներկա սերունդները, թե «Հայաստանի ծաղիկ հայ որբերը», թեև Արարատի շուքի տակ, բայց, այնուամենայնիվ մեծացած այլ մթնոլորտում, այդ ստեղծագործ, ժրաջան ու աշխատող որբերը ինչքա՛ն հոգի ու ջանք թափեցին, որպեսզի բերեն, Արարատի շուքի տակ բնակեցնեն նաև իրենց փրկարարին ու հայրենիքում հնչեցնեն Անդրանիկի անունը»:

Բանաստեղծուհու պատկերավոր համեմատությամբ, Անդրանիկը իր սերնդի Շուշին էր. «Մեմբ էլ, մեր սերունդներն էլ ունեցել ենք մեր Շուշին, ունեցել ենք մեր պայքարը ընդդեմ տիրող ազգամերժ գաղափարների, վերից իջնող կաշկանդիչ ու թռչունների ու հրահանգների, ՊԱԿ ու գրաքննություն կոչվող հաստատությունների՝ ամենուր ձեռքիդ ու ոտքիդ խճվող սարդոստայնի: Անդրանիկը մեր Շուշին էր, որին նյարդերի մեծագույն պրկումով ու հաճախանքի հասնող մտասևեռումով տարեցտարի, օրեցօր, քայլառքայլ ազատագրում էինք ու վերջապես ազատագրեցինք արգելափակյոցներից»:

Սա բանաստեղծական հրաշալի գյուտ է, Անդրանիկի կերպարի վեհությունը խտացնող ու ամփոփող լավագույն բնութագրումը:

Իր մահից 73 տարի անց զորավարը վերադարձավ հայրենիք. մի իրադարձություն, որին այնպես սպասում էին սերունդներով: Բանաստեղծուհին այդ առիթով ասում է, որ Անդրանիկի՝ հայրենիք վերադարձի մեջ անցնող սերունդների բաժինն էլ կա, մեր վախերն ու տագնապները կան: Քանզի տարիներ շարունակ մենք սպասել ենք նրա վերադարձին, «մեր մտքերում նրա համար փնտրել-ջուրկել ենք մեր հողի ամենալավ անկյունը, ամենաբարձր գագաթը, ամենագեղեցիկ հրապարակը»:

Եվ ճշմարիտ ու իրավացի է բանաստեղծուհու այն դիտարկումը, թե մենք երազում էինք նրան դիմավորել մոր, գործը, ծաղկուն ու երջանիկ Հայաստանով,

առողջ, հպարտ, բարեկեցիկ ժողովրդով, որություն բառը իսպառ մոռացած կարմրաթուշ, ծիծաղկուն երեխաներով:

Սակայն այդպես չեղավ, այդպես չէ...

Ուստի, այդ պատճառով է, որ բանաստեղծուհին մեղմորեն շշնջում է. «Ներիր, Չորավար, որ այդպես չեղավ, այդպես չէ: Ներիր, որ այսօր տխուր է Հայաստանը, տխուր է քո ժողովուրդը, բեկված, շփոթահար, քանզի երկրի դեկին կանգնած այրերից ոչ բոլորը մտապահեցին քո խոսքերը. «Երբ իրիկունը գլուխներդ բարձին դնեք, որ քնանաք, մի քիչ մտածեք ձեր ազգի մասին... Աշխատեցեք, որ ապագա սերունդին և ապագա պատմությանը լավ բան տաք և ոչ թե անեծք»... Ներիր, նրանց էլ ներիր, Չորավար»:


Բանաստեղծուհին ցավով ու բողոքով այսպես, այս տողերով է դիմում հայոց զորավարին. «Ներիր, որ չգտանք, մեզ չթողեցին գտնել այն բարձունքը, այն միակ, միայն քեզ պատկանող ու քեզ արժանի սրբատեղին, ուր պիտի ամփոփվեր քո՝ Մեծ թափառականիդ հոգնատանջ մարմինը»:

Թեկուզև այդպես չեղավ, չգտնվեց այն միակ սրբազան բարձունքը, այնուամենայնիվ, Չորավարի վերադարձը հայրենիք ընկալվեց ու ընդունվեց որպես ազգային ու համազգային կարևորության բացառիկ մի իրադարձություն:

Ողջ հայությունն ու հայ ժողովուրդը Չորավար Անդրանիկին հոգեկան վերին աստիճանի սլացքով, պատվով ու վեհությամբ ընդունեց և ճանապարհեց դեպի Եռաբլուրի բարձունքը:

Անդրանիկը միշտ ներկա է եղել մեր ժողովրդի երեկվա և այսօրվա պատմական երթում և այդպես կլինի առիավետ: Ժողովուրդն ու իր մեծ զորավարը անբաժանելի՝ ու անբաժան են միմյանցից: Թերևս հենց այս տրամաբանությամբ և հրամայականով բանաստեղծուհին ամփոփիչ սույն միտքն է արձանագրում. «Բայց դու լավ գիտես, Չորավար, որ քեզ հետ է քո ժողովուրդը, որն ինչքան էլ դառնացած ու թևաթել, իր հոգում քեզ համար պահած մի մաքուր անկյուն ունի, մի մաքուր երկինք, որտեղ դու՝ մշտապես իբրև արծիվ սավառնել ու սավառնելու ես լեռ ու ժայռ...»:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների
թեկնածու, հրապարակախոս



կան երկրաբանությունում: Շերտագրություն և հնէաբանություն, ռեզիոնալ երկրաբանություն և տեկտոնիկա, սեյսմատեկտոնիկա և մեծ երկրաֆիզիկա, մագմայականություն և նորագույն հրաբխականություն, մոլորակագիտություն և մետաղագոյացում, չորրորդական երկրաբանություն և իմժեմերային երկրաբանություն՝ ահա նրա գիտական հետաքրքրությունների շրջանակները: Եվ այս բոլորը խորը մասնագիտական մակարդակով: Միևնույն ժամանակ Ա. Ս. Ասլանյանի գիտական հետաքրքրությունների շարքում գոյություն ունեին ուղղություններ, որոնց նա տալիս էր իր նախապատվությունը: Դրանք էին՝ ռեզիոնալ երկրաբանությունը և տեկտոնիկան, մեծ երկրաֆիզիկան և մոլորակագիտությունը: Եվ

возможным к чему-нибудь прижаться в Ваших аргументах».

Եվ պատահական չէր, որ այդ աշխատանքներից հետո Ա. Ս. Ասլանյանը երկու անընդմեջ ժամկետ ընտրվեց Մոլորակագետների միջազգային ասոցիացիայի փոխարեզիդենտ:

Ա. Ս. Ասլանյանի տեսական հետազոտությունների շարքում առանձնակի տեղ է զբաղեցնում նրա «К аксиоматике геологической науки» աշխատանքը (1980):

Ա. Ս. Ասլանյանը ավելի քան 12 տարի (1975-1987 թթ.) գլխավորեց ԵԳԻ: Այդ տարիները ինստիտուտի գործունեության ամենարգասաբեր տարիներից էին: Դրա ապացույցը եղավ 1985 թ. ինստիտուտի պարգևատրումը «Աշխատանքային կարմիր դրո-

ամրապնդման, բուհերում գիտահետազոտական և կոնստրուկտորային աշխատանքների ընդլայնման, մի շարք մոր ֆակուլտետների, ամբիոնների և լաբորատորիաների կազմակերպման գործում: Շուրջ 40 տարի Ա. Ս. Ասլանյանը վարում էր դասախոսական գործունեություն՝ լինելով ԵՊՀ-ի, պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր, նրա ղեկավարությամբ պաշտպանվել է 12 թեկնածուական ատենախոսություն: Հարկ է նշել, որ մույնիսկ պետական ատյաններում աշխատելու տարիներին Ա. Ս. Ասլանյանը շարունակում էր զբաղվել երկրաբանության խնդիրներով, ակտիվ մասնակցում էր երկրաբանական Միջազգային կոնգրեսների, կոնֆերանսների, խորհրդակցությունների աշխատանք-

Բազմապատասխան գիտնականն ու պետական գործիչը

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ ԱՍԼԱՆՅԱՆԻ ծննդյան 100-ամյակի առթիվ

Փետրվարի 7-ին լրացավ ականավոր երկրաբան և պետական գործիչ ակադեմիկոս Ա. Ս. Ասլանյանի ծննդյան 100-ամյակը: Տպավորիչ է նրա կյանքի ու գործունեության հիմնական փուլերի սոսկ թվարկումը: 1941 թ. ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը և մեկնել ռազմաճակատ, 1941-1943 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, 1943 թ. ծանր վիրավորվել և զորացրվել է բանակից, 1945-1954 թթ. երկրաբանական գիտությունների ինստիտուտի (ԵԳԻ) ասպիրանտ, գիտաշխատող, ապա, իր նախաձեռնությամբ կազմակերպված ռեզիոնալ երկրաբանության սեկտորի վարիչ, 1954-1965 թթ. Հայաստանի երկրաբանական վարչության գլխավոր իմժեմեր, ապա պետ, 1965-1966 թթ. Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր, 1966-1975 թթ. բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար, 1975-1987 թթ. ԵԳԻ տնօրեն: 1965 թ. ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթ. անդամ, 1986 թ.՝ ակադեմիկոս:

Արդեն նրա թեկնածուական ատենախոսությունը՝ «Стратиграфия юрских отложений Северной Армении», որը պաշտպանվեց 1947 թ. և հրատարակվեց 1949 թ., վկայում էր, որ ասպարեզ է եկել չափազանց խոստումնալից գիտնական, և Ա. Ս. Ասլանյանի հետագա գիտական գործունեությունը դարձավ դրա համոզիչ ապացույցը:

1957 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ԳԱ երկրաբանական ինստիտուտում նա փայլուն պաշտպանեց «Региональная геология Армении» դոկտորական ատենախոսությունը, որը 1958 թ. հրատարակվեց որպես մենագրություն և լայն ճանաչում ստացավ տարբեր երկրների մասնագետների շրջանում: Անցել է ավելի քան 60 տարի, բայց այդ կապիտալ մենագրությունը չի կորցրել իր նշանակությունը:

Ա. Ս. Ասլանյանը չափազանց բազմակողմանի գիտնական էր, և այդ տեսակետից, վստահորեն կարելի է ասել, որ նա բացառիկ երևույթ էր հայրենա-

այն բնագավառներում նա ասել է իր նոր, ծանրակշիռ խոսքը:

Բնականից հակում ունենալով դեպի ճշգրիտ գիտությունները՝ Ա. Ս. Ասլանյանն աշխատում էր օգտագործել մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի հնարավորությունները և ձեռքբերումները երկրաբանության կարևորագույն պրոբլեմների քննարկման ընթացքում: Այդ տեսանկյունից նշենք «Исследование по тектонической деформации Земли» (1955 г.) և «Основы количественной теории магнитного поля Земли» (1962 г.) մենագրությունները, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրեցին տեսաբանների շրջանում: Չափազանց կարևոր էին Ա. Ասլանյանի տեսական աշխատանքները, որոնք գտնվում էին մեծ երկրաֆիզիկայի և մոլորակագիտության սահմանագծում («Большие изменения внутреннего объема и полярного сжатия Земли и их тектонические последствия», 1983 и др.): Այդ աշխատանքներում տրվեցին լիթոսֆերայի ֆիզիկամեխանիկական բնութագրերի քանակական գնահատականները, Երկրի միջուկի, կեղևի խտության, մասսայի, ձևի, ծավալի և միջին տեսակարար կշռի էվոլյուցիայի հաշվարկային որոշումները՝ գոյության 4.5 մլրդ տարիների ընթացքում: ԽՍՀՄ ԳԱ փոխարեզիդենտ, ակադ. Ա. Յանշինը Ա. Ս. Ասլանյանին ուղղված նամակում (1984 թ.) մասնավորապես գրում էր. «... Вы в этой своей статье и в предшествующих подняли ряд очень важных для каждого геолога вопросов, лежащих на стыке тектоники, геофизики и небесной механики... Вы уверенно доказываете эволюцию формы, объема и среднего удельного веса вещества Земли за 4.5 млрд лет ее существования, причем приведенным Вами расчетам трудно что-либо противопоставить... Ваши расчеты безукоризнены. Я показывал Вашу статью академику В.А.Магницкому, который гораздо лучше меня знает физику и математику, и он не нашел

չի» շքանշանով:

Ինստիտուտում աշխատելու տարիները չափազանց բեղմնավոր էին Ա. Ս. Ասլանյանի համար: Նրա շուրջ 200 գիտական հոդվածների և 9 մենագրությունների մեծ մասը գրվել են ինստիտուտում աշխատելու տարիներին:

Ա. Ս. Ասլանյանի կյանքի և գործունեության կարևոր փուլերից էր նրա աշխատանքը պետական կառույցներում: Հենց այստեղ առավել ցայտուն դրսևորվեցին նրա կազմակերպչական մեծ կարողությունները: 11 տարի նա աշխատեց Հայաստանի Մինիստրների խորհրդի երկրաբանական վարչությունում նախ որպես գլխավոր իմժեմեր (1954-1961 թթ.), ապա վարչության պետ (1961-1965 թթ.): Այդ տարիներին զգալիորեն ամրապնդվեց և կատարելագործվեց հանրապետության երկրաբանական ծառայությունը, ընդարձակվեց երկրի հանքահումքային բազան:

Ա. Ասլանյանի ղեկավարությամբ և համահեղինակությամբ Մոսկվայում լույս տեսավ «Геология СССР» բազմահատորյակի XLIII հատորը նվիրված Հայաստանին: «Геологическое описание» (1970 թ.), «Полезные ископаемые» (1974 թ.):

Ա. Ս. Ասլանյանի գործունեության մի այլ կարևոր ոլորտ հանդիսացավ բարձրագույն դպրոցը: 1965 թ. նա նշանակվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր: Նկատի ունենալով հանրապետության արագ զարգացող լեռնամետալուրգիական կոմպլեքսի պահանջները՝ Ա. Ս. Ասլանյանի նախաձեռնությամբ ինստիտուտում կազմակերպվեց լեռնամետալուրգիական ֆակուլտետ, սեյսմատեկտոնիկայի պրոբլեմային լաբորատորիա, որը նա գլխավորում էր շուրջ 10 տարի՝ միաժամանակ ղեկավարելով «Ընդհանուր և ռեզիոնալ երկրաբանության» ամբիոնը: 1966 թ. Ա. Ս. Ասլանյանը նշանակվեց բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար և 10 տարի աշխատեց այդ պատասխանատու պաշտոնում: Նա մեծ ավանդ ունի բարձրագույն դպրոցի նյութատեխնիկական բազայի

ներին (Ֆրանսիա, Գերմանիա, Չեխոսլովակիա, Բելգիա, Դանիա և այլուր), որտեղ հանդես էր գալիս փայլուն գեկուցումներով և ելույթներով: Նա վաղելում էր մեծ հեղինակություն գիտնականների լայն շրջաններում, ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում: Ակադեմիկոսներ Վ. Լ. Բարսուկով, Ն. Պ. Լավյորով, Վ. Ե. Խային, Վ. Ի. Կեյլիս-Բորոկ, Ա. Լ. Յանշին, Ս. Ա. Սիդորենկո՝ ահա երկրաբանության տարբեր ոլորտների ճանաչված գիտնականների ոչ լրիվ ցանկը, որոնց հետ նա ուներ սերտ գիտական կապեր, և որոնք բարձր էին գնահատում Ա. Ս. Ասլանյան գիտնականին:

Ա. Ս. Ասլանյանը Նյու Յորքի ակադեմիայի անդամ էր, երկու անընդմեջ ժամկետ եղել է՝ մոլորակագետների Միջազգային ասոցիացիայի փոխարեզիդենտ, ԽՍՀՄ ԳԱ Անդրկովկասի չորրորդական ժամանակաշրջանի ուսումնասիրության հանձնաժողովի նախագահ, ԵԳԻ մասնագիտական խորհրդի նախագահ, «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի գլխավոր խմբագիր:

Ա. Ս. Ասլանյանի գործունեության արդյունքները արժանացել են բարձր պետական պարգևների՝ Հայրենական մեծ պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի երեք շքանշան, Ժողովուրդների բարեկամության շքանշան: Նա պարգևատրվել էր Գերմանիայի Միներալոգիական ընկերության Աբրահամ Վերների անվան մեդալով, ՍՍՀՄ Աշխարհագրական ընկերության Սենյոնով-Տյանշանսկու անվան մեդալով:

Ա. Ս. Ասլանյանը կյանքից հեռացավ 1989 թ. մարտի 17-ին: Նրա հիշատակը միշտ վառ կմնա բոլորի մոտ, ում բախտ է վիճակվել ճանաչել և աշխատել նրա հետ, իսկ նրա հարուստ գիտական ժառանգությունը դեռ երկար տարիներ կծառայի երկրաբանների ներկայիս և գալիք սերունդներին:

Ռ. Լ. ՄԵԼՔՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Ամերիկյան «Vanity Fair» հեղինակավոր ամսագիրը 2008-ի հոկտեմբերին տպագրել է հոդված՝ նվիրված ֆրանսիական ակադեմիային: Այն խորագրված է «Ամնահները» («The Immortals»):

Հոդվածում ներկայացված է ֆրանսիական ակադեմիայի անցյալն ու այսօրը: Ամնահներ կոչվում են ֆրանսիական ակադեմիայի 40 անդամները, որոնք ապրելով երկրագնդի վրա, եղել են Ֆրանսիայի ամենասրբազան արժեքի՝ ֆրանսիական լեզվի և գրականության պահպանները: Ակադեմիայում հավաքված են Ֆրանսիայի ամենախորունկ մտքերը: Ամնահներն ունեն իրենց ծիսական հագուստը. այն կանաչ է՝ ասեղնագործված բույսի տերևների նման թանկարժեք նախշերով: Նույն ծիսական հագուստը հագնում են և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Յուրաքանչյուր ակադեմիկոսի հագուստն արժե 60.000 ամերիկյան դոլար: Ակադեմիայում ընտրված անդամը հագուստից բացի ստանում է նաև ամմահի սուրը: Այդ օգուտոսափառ անդամները 60-99 տարեկան են: 2018 թվականի հոկտեմբերին նրանցից ամենաավագը՝ Ռենե դը Օբալդիան, դարձավ 100 տարեկան:

Ֆրանսիական ակադեմիան հիմնադրել է կարդինալ Ռիշելյոն՝ Ֆրանսիայի արքա Լյուդովիկոս XIII-ի գլխավոր նախարարը: Ակադեմիայի առաջնահերթ խնդիրն է եղել ստեղծել ֆրանսերենի պաշտոնական բառարան: Ուղիղ 56 տարի է տևել մինչև ավարտվել են այդ բառարանը կազմելու աշխատանքները: Հիմա էլ՝ 1986 թվականից, պատրաստվում է նոր ակադեմիական բառարան, որի աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Քառասուն ամնահներից յուրաքանչյուրն ունի իր համարակալված բազկաթոռը: Ամնահները հավաքվում են ձմռան սեզանի շուրջ և սկսում են քաղաքավարի ու կիրթ քննարկել ֆրանսերեն լեզվի ու գրականության խնդիրները: Ամնահներից է Լուվրի թանգարանի նախկին տնօրեն պատմաբան Պիեռ Ռոզենբերգը, որն ընտրվել է 1995-ին և զբաղեցնում է 23-րդ բազկաթոռը: «Մենք նրա համար չենք այստեղ, որ կանգնեցնենք փոփոխությունը»-ասում է գրող սըր Մայքլ Էդվարդսը՝ միակ անգլիացի ամնահը, որը 2013 թվականից զբաղեցնում է 31-րդ բազկաթոռը: Նա ավելացնում է, թե ակադեմիայի նպատակն է առաջ տանել ֆրանսերենը մի ճանապարհով, որ այն դառնա առավել պերճ, ճարտար ու գեղեցիկ:

Ակադեմիան կարդինալ Ռիշելյոն հիմնադրեց 1635-ին: Նրա նպատակն էր կանոնակարգել ֆրանսերենի պարտադիր կանոնները, օգնել լեզուն մաքրել ավելորդություններից ու դարձնել այն հասկանալի բոլորին: Չմոռանա՞նք, որ մինչև XVIII դարը լատիներենը փորձում էր պահպանել իր գրող լեզու լինելու դերը ողջ Եվրոպայի, անգամ Ռուսաստանի համար: Բավական է հիշել Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգին» վեպ-պոեմի հետևյալ տողերը.

«Латынь из моды вышла ныне:
Так, если правду вам сказать,
Он знал довольно по латыне,
Чтоб эпиграфы разбирать».

Ռիշելյոն ջանում է ստեղծել գեղեցիկ ֆրանսերեն գրական լեզու, որը հեռու լիներ բարբառային շեղումներից և ունենար ընդհանուր կանոններ:

Այսօր Ֆրանսիայի ամնահները լիովին համաձայն են կարդինալ Ռիշելյոյի այն խիստ պահանջի հետ, թե **լեզուն ուժ է**: XXI դարում կարդինալի միտքը նույնքան ճշմարտացի է, որովհետև լեզուն քաղաքական ամենահզոր գործիքն է և ուժը:

Ներկայիս Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտարարել է իր ծրագիրը՝ ուղղված ամնահներին ու Ֆրանսիայի ժողովրդին: Այժմ աշխարհի մեկ հիմնգործող խոսում է ֆրանսերեն՝ մոտ 300 միլիոն մարդ: Դրանց թվաքանակը հարկավոր է մեծացնել:

Ֆրանսիական ակադեմիան սկզբնա-

կան շրջանում տեղավորված էր Լուվրում, սակայն 1805 թվականին Նապոլեոն Բոնապարտի հրամանով տեղափոխվել է ներկայիս շքեղ պալատը, որը ճարտարապետական գլուխգործոց է՝ կառուցված դասական և բարոկոյի ոճական խառնուրդով: Ֆրանսիական ակադեմիան ունի ևս 4 ինստիտուտներ, որոնք ներկայացնում են տարբեր գիտաճյուղեր: Դրանք են՝ ա) «Արձանագրությունների և գրականության ակադեմիա», բ) Գիտությունների ակադեմիա, գ) Արվեստի ակադեմիա, դ) Բարոյագիտության ու քաղա-



ԱՆՄԱՀՆԵՐԸ

քագիտության ակադեմիա: Բոլոր ակադեմիական ինստիտուտներն ունեն իրենց առանձին գործունեության բնագավառները՝ ամնահների հովանու ներքո: Նրանք միասին ստանում են 25 միլիոն ամերիկյան դոլար՝ տարվա ընթացքում բաշխելու համար:

Ամնահների ծիսական հագուստը հաստատվել է Նապոլեոն Բոնապարտի ստեղծած հանձնաժողովի կողմից, որի մեջ մտել են Ժակ-Լուի Դավիդը և քանդակագործ Ժան-Անտուան Դուրոնը: Վերջերս ամնահների հագուստները կարում են այնպիսի մոդայի տներ, ինչպիսիք են Քրիստիան Լակրուան և Պիեռ Կարդենը: Ամնահների ակադեմիական զարդերը պատրաստում են այնպիսի նշանավոր ֆիրմաներ, ինչպիսիք են Կարտիեր և Լորենց Բաունը: 1955 թվականին Կարտիե ֆիրման գրող Ժան Կոկտոյի ամնահի սուրը պատրաստել է նրա սիրելի առասպելական կերպար Օրփեոսի կիսադեմոն:

Ֆրանսիայի կառավարությունը մեծ հոգատարություն է ցուցաբերում ակադեմիայի նկատմամբ: Ակադեմիայի ինստիտուտները ունեն մոտ մեկ միլիոն եվրո դրամազուլիս, Փարիզում տեղ են սեփական 40 ընտիր շենքերի, հեկտարներով անտառների, բազում պատմական ղյուակների: Դրանց թվում է արտակարգ Շանտիլլին, որի կտավների հավաքածուն իր կարևորությամբ երկրորդն է Ֆրանսիայում՝ Լուվրից հետո:

Ֆրանսիայի նախագահների համար երկրի ակադեմիան ազգային ամենամեծ արժեքն է: Եվ ամնահներից յուրաքանչյուրին հրաժեշտ են տալիս մեծ պատվով Լյուդովիկոս XIV-ի կառուցած Դաշմանդանների տան հրապարակում, որի եկեղեցու գմբեթի տակ թաղված է Նապոլեոն Բոնապարտը: 2018 թվականին Դաշմանդանների տան բակում նախագահ Մակրոնը և նրա կինը Բրիջիտը, նախկին նախագահներ Նիկոլա Սարկոզին և Ֆրանսուա Օլանդը վերջին հրաժեշտն էին տալիս ամնահներից սիրված գրող՝ 92-ամյա Ժան դ' Օրմեսանին, որը Ակադեմիայի երկարամյա անդամն էր: Նախքան մատիտը եռագույն դրոշով ծածկված դագաղի վրա դնելը՝ Մակրոնն ասաց. «Մենք այստեղ

ենք՝ տարբեր տարիքի, նախադրյալների, մասնագիտությունների, քաղաքական կարծիքների, բայց միասնական նրանով, որ նշանակում է Ֆրանսիա և սեր դեպի գրականությունը»:


2017-ին ամնահների կազմում ավելացավ նոր կին՝ բանասեր Բարբարա Կասսենը: Նա 71 տարեկան էր: Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար դ' Էստենը, որն ամնահ էր դարձել 2003-ին և այժմ 92 տարեկան է, հեռագրել է նորընտիր կնոջը, շնորհավորել նրա փայլուն ընտրությունը: Ամնահներ

ը մտահոգ են անգլերեն նորաբանությունները ֆրանսերենի համարժեքներով փոխարինելու խնդրով:

Ամնահներից Պիեռ Ռոզենբերգն ասում է. «Մեզ ասում են ամնահներ, սակայն դա, կատակ է իհարկե: Ո՞վ է հիշելու մեզ: Ամնահը Ակադեմիայի ինստիտուտներն են: Իսկ Կառնե դ' Էնկոսը պարզապես ասում է. «Մենք ամնահ ենք կոչվում, որովհետև համոզված ենք ֆրանսերենը ամնահ է»: Անգլիացի սըր Մայքլ Էդվարդսն էլ հավաստիացնում է, թե 1986-ին սկսված ֆրանսերենի նոր ակադեմիական բառարանի աշխատանքը կավարտվի 2021-ին:

Ֆրանսիայի ակադեմիայի նկատմամբ ունեցած այդ երկրի կառավարության վերաբերմունքը հավաստում է, թե ամեն երկրի ու ազգ հարատևում են լեզվով, գրականությամբ, գիտությամբ ու մշակույթով: Դրանք են ազգի ոգին: Դրա վառ ապացույցը ԱՄՆ-ի Մետրոպոլիտեն թանգարանում 2018 թվականի սեպտեմբերին բացված և 3 ամսից ավելի տևած «Հայաստան» («Armenia») ցուցահանդեսն էր, որը պերճախոս վկայում էր, թե դարերի փորձությունից հետո հայերը հասել են XXI դար, որովհետև նվիրված են եղել իրենց լեզվին, գրականությանը, մշակույթին ու հիմա ունեն պետականություն ու Ազգային ակադեմիա՝ հիմնալի ակադեմիական ինստիտուտներով: Եվ դա ՀՀ ԳԱԱ 75-ամյակին նվիրված ողջույնի խոսքում հաստատեց եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության փոխնախագահ, պրոֆեսոր Քեյ Գրահամը՝ «Այս ակադեմիան կայունության և տոկունության օրինակ է թողել, և մենք բոլորս էլ պատրաստ ենք սովորելու նրա պատմությունից և գիտական ձեռքբերումներից: Ուրեմն եկեք վայելենք այս երեկոն տոնելու, ինչպես նաև ներկայի աչքերով անդրադառնալու նրա նախկին նվաճումներին, որպեսզի երբեք չկորցնենք այն, ինչով կկարողանանք նպաստել ավելի լավ ապագայի կերտմանն ու ձեռքբերումներին:

**Անխտա ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**



ԳՅՈՒԼԵՆԿՅԱՆԻ ՀԵՏԱԲՐԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ՝ ԱՆՂԵՐԵՆՈՎ

«Լոնդոնի Քինգզ քոլեջի շրջանավարտ, 19-ամյա Գալուստ Գյուլբենկյանը մեկ անգամ էր միայն, Բաքու այցելության ժամանակ, տեսել նախահանք, բայց ամնիջապես ընթերցել էր այդ ընդերքի կարելությունը և հետագա հնարավորությունները միջազգային շուկայում: Լոնդոնում որպես ձեռնարկատերի ձեռք բերած մասնագիտական հմտությունները զուգակցելով Մերձավոր Արևելքում հաստատած իր բազմաթույք կապերի հետ, նա շատ շուտով իր համար 5 տոկոսի չափով բաժնետոմսեր է կարողանում ապահովել Օսմանյան կայսրության Ասիական տարածքում գտնվող բոլոր նավթահանքերում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կնքված այդ պայմանագիրը այնքան էլ մեծ գումար չէր խոստանում ապահովել, բայց հետագայում այն մեծ հարստություն դարձավ, որն այսօրվա հաշվարկներով հավասար է նոտավորապես հինգ միլիարդ դոլարի: Նրա կյանքի պատմությունը չափազանց հետաքրքրական է», գրում է անգլիական հեղինակավոր «**Գարդիան**» թերթում **Օլիվեր Բուլոուն**, գրախոսելով Գյուլբենկյանի ծննդյան 150-ամյակի առթիվ Անգլիայում վերջերս անգլերեն լեզվով լույս տեսած «**Պարոն հինգ տոկոսը**» (Mr. Five Per Cent) կենսագրական հատորը, որի հեղինակն է **Ջոնաթան Կոնլին**: 416 էջանոց գիրքը պարունակում է 8 էջ գումար եւ 16 էջ սև ու սպիտակ լուսանկարներ:

Հեռատես Գալուստ Սարգսի Գյուլբենկյանը ծնվել էր 1859-ին Կոնստանդնուպոլսում, որտեղ 1911-12 թվերին հիմնել էր Թուրքիայի նավթային ընկերությունը: Եղել էր Փարիզի և Լոնդոնի թուրքական դեսպանատների տնտեսական խորհրդակցանք: Այնուհետև Լոնդոն տեղափոխվելով ստացել էր անգլիական հպատակություն, սակայն դժվար բնավորության տեր անձնավորություն լինելով, խուսափել էր լուրջ կապեր հաստատել այնտեղ կամ Փարիզում: Նախընտրել էր հաստատվել Լիսաբոնում, որտեղ էլ վախճանվել էր 1955-ին: Իր կտակի համաձայն 1956-ին այնտեղ հիմնվել է Գալուստ Գյուլբենկյան հաստատությունը, որը Եվրոպայի մեծագույն բարեգործական կառույցներից մեկն է և նպաստներ է հատկացնում նաև սփյուռքահայ մշակութային միություններին, վարժարաններին, հայապահպանական ծրագրերին: Իսկ հաստատության կից գործող պատկերասրահը Լիսաբոնի տեսարժան վայրերից ամենափնտրվածն է իր արվեստի հարուստ ու անզուգական գործերով:

Գյուլբենկյանը նաև 1930-ին ընտրվել է ՀԲԸՄ-ի նախագահ, հաջորդելով Պողոս Նուպարին, սակայն մեկ և կես տարի անց ներկայացրել է իր հրաժարականը՝ հիմք ունենալով Խորհրդային Հայաստանի կառավարության իր հասցեին ուղղած մեղադրանքները:

«Ազգ»

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Արթուր Հարությունյանը

Սույն թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում, ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց քիմիական գիտությունների դոկտոր Արթուր Հարությունյանը:

Արթուր Հարությունյանը ծնվել է 1957 թ.-ին, Բաքվում: 1980 թ.-ին ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական գործ բաժինը: 1995 թ.-ին ստացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2017 թ.-ին՝ դոկտորի գիտական աստիճան:

1988-2015 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Ա. Մնջոյանի անվան մուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում՝ նախ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ավագ գիտաշխատող: 2015-2018 թթ. աշխատել է Հայ-ռուսական համալսարանում՝ գիտական ծրագրերում:

2019 թ.-ի հունվարի 8-ից ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի «Հակառուսացային միացությունների սինթեզ»-ի լաբորատորիայի վարիչն էր:



ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Անահիտ Ղուկասյանը



ՀՀ ԳԱԱ նախագահության հունվարի 30-ի նիստում ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Անահիտ Ղուկասյանը:

Անահիտ Ղուկասյանը ծնվել է 1960 թ.-ին, Թբիլիսիում: 1984 թ.-ին ավարտել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտը և աշխատանքի անցել ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտում: 2004 թ.-ից ինստիտուտի գիտքարտուղարն էր:

Անահիտ Ղուկասյանը 4 մեմագրության և 50 գիտական հոդվածի հեղինակ է: Նա զբաղվում է Հայաստանի ֆլորայի ներկայացուցիչների, հատկապես էնդեմիկ, հազվագյուտ, անհետացող և կարմիրգրքային տեսակների կարիոլոգիական հետազոտությամբ:

Անահիտ Ղուկասյանը Հայկական բուսաբանական ընկերության, Ռուսական բուսաբանական ընկերության անդամ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց Լիլիթ Ղազանչյանը

Սույն թվականի փետրվարի 6-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն ընտրվեց իրավաբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Ղազանչյանը:

Լիլիթ Ղազանչյանը ծնվել է 1982 թ.-ին, Երևանում: 2008 թ.-ին ավարտել է Հայաստանում ֆրանսիական համալսարանի մագիստրատուրան, մասնագիտացումը՝ իրավագիտություն: 2015 թ.-ին ստացել է իրավագիտության թեկնածուի գիտական աստիճան:

Լիլիթ Ղազանչյանը 3 մեմագրության, 27 գիտական հոդվածի հեղինակ է: Նա Հայ-ռուսական համալսարանի 063 իրավագիտության մասնագիտական խորհրդի անդամ է, ինչպես նաև «Юридический факт» научный юридический журнал (ՌԴ) ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Ջոն Կարապետյանը

Հունվարի 30-ի ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց Ջոն Կարապետյանը:

Ջոն Կարապետյանը ծնվել է 1982 թ.-ին՝ Գյումրիում: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանն ավարտելուց հետո սկսել է աշխատել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում:

Ջոն Կարապետյանը ինստիտուտի տնօրենի պաշտոնը զբաղեցնում է 2013 թ.-ից: Նա 55 գիտական աշխատությունների և մեկ պատենտի հեղինակ է: Նրա գիտական գործունեության ոլորտը ներառում է՝ երկրաֆիզիկա, ինժեներային սեյսմաբանություն, սեյսմակայուն շինարարություն, երկրաֆիզիկական սարքաշինություն. սեյսմիկ վտանգի ու ռիսկի գնահատման մեթոդների, սեյսմիկ սանդղակների մշակում և կատարելագործում:

Ջոն Կարապետյանը ճանաչվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կողմից 2011 թ.-ին հայտարարված «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության դափնեկիր երկրաբանություն անվանակարգում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ԸՆՏԱԶԵՐԶՐԱԿԱՆ

ԵՌ-Ե ՄԵՆՔ ՉԾՆՎԵԻՆՔ

Չէիք ծիծաղի 290.000 անգամ (Հայաստանում թիվը հաստատ ավելի մեծ է, մենք սիրում ենք ծիծաղել): Ներկայացվող փաստերը, անշուշտ, հետաքրքիր են, բայց շատ ավելի հետաքրքիր է ապրելը, և այս ամենը մաշկիդ վրա զգալը՝ թեկուզ առանց հաշվելու: Վայելե՛ք կյանքը երկրի վրա, չէ՞ որ այն բացառիկ է:

Եթե այսօր Ձեր ծննդյան օրն է, ապա տեղեկացնենք, որ Ձեր մախորդ ծննդյան օրվանից հետո աշխարհի բնակչությունն աճել է մոտ 76 միլիոնով: Այնուամենայնիվ, հետաքրքիր է իմանալը, ի՞նչ կլինեն, եթե մենք չծնվեինք: «Ճամփորդը» հետաքրքիր փաստեր է հավաքել այն մասին, թե ինչ ու որքան է օգտագործում մարդը միջին տևողությամբ իր 70-ամյա կյանքի ընթացքում: Ըստ այդմ, եթե մենք չծնվեինք, ապա չէր օգտագործվի 2 միլիոն 560 հազար լիտր ջուր, որից 60 հազարը ծախսվում է խմելու, 25 հազարն էլ՝ ջրային պրոցեդուրաների վրա: Լողանալու վրա ծախսվող ջուրը կբավականացներ օլիմպիական լողավազանը երկու անգամ ամբողջովին լցնելուն:

Չէիք ուտի մոտավորապես 45 տոննա ուտելիք, որը հավասար է մոտ յոթուկես փղի կամ 62 կովի քաշի: Դուք չէիք շնչի-արտաշնչի 550 միլիոն անգամ՝ ծախսելով 220 միլիոն լիտր թթվածին և արտաշնչելով 11.037.600 լիտր ածխաթթու գազ, որը «մարսելու» համար մեկ հեկտար տարածք զբաղեցնող անտառից կպահանջվի 150 տարի: Միջին հաշվարկով Դուք չէիք քայլի 177.000 կիլոմետր, որը հավասար է չորս անգամ ամբողջ աշխարհով շրջելուն: Տեղի չէր ունենա մոտ 15.000 վիճաբանություն, որը հրահրում է մարդը (ծիծաղելի թիվ է, սա կանանց ամենօրյա նորման է: Նաև տղամարդկանց, եթե ֆուտբոլի ժամանակ հարց տաս): Ձեր կյանքի երեք շաբաթը չէր ծախսվի երթուղային տաքսիներում կամ մեքենայում կարմիր լույսի տակ սպասելու վրա: Աշխարհում չէր կուտակվի Ձեր կողմից ստեղծված, երեքուկես ֆուտբոլային դաշտի մակերես զբաղեցնող 25.550 կիլոգրամ աղբ: Ձեր օգտագործվի ամենաթիվը 41.657.342 վատ հոսանք: Այսքան հոսանքը կբավականացներ առնարանին՝ 180 տարի անդադար աշխատելու համար (գրագ եկեք երեխաների հետ, գուցե հետմահու հաղթեք): Ամեն օր մարդ արտադրում է այնքան ջերմություն, որը կհերիքեր 33 լիտր ջուրը եռացնելու համար: Ստացվում է, որ Դուք կարող էիք դրա հաշվին հալեցնել 280 տոննա սառցաբեկոր: Սա էլ նշանակում է, որ Ձեր գոյությունը նպաստում է գլոբալ տաքացմանը: Դուք չէիք սիրահարվի միջինը 2.5 անգամ: **Չէիք ծիծաղի 290.000 անգամ** (Հայաստանում թիվը հաստատ ավելի մեծ է, մենք սիրում ենք ծիծաղել): Ներկայացվող փաստերը, անշուշտ, հետաքրքիր են, բայց շատ ավելի հետաքրքիր է ապրելը, և այս ամենը մաշկիդ վրա զգալը՝ թեկուզ առանց հաշվելու: Վայելե՛ք կյանքը երկրի վրա, չէ՞ որ այն բացառիկ է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի հետևյալ թափուր պաշտոնների համար.

1. Արդի հայերենի բաժնի վարիչի

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու հմտություն:

Պահանջվող փաստաթղթերը՝ դիմում, լուսանկար, քաղվածք աշխատանքային գրքույկից, ինքնակենսագրություն, գիտական աստիճանը հաստատող վկայականի պատճեն, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, անձնագրի պատճեն, հրատարակված աշխատանքների ցանկ, գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում), բնութագիր վերջին աշխատավայրից:

2. Արևմտահայերենի բաժնի կրտսեր գիտաշխատողի

Մրցույթին կարող են մասնակցել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:

Ամերիկա Մեծ Նահանգներում կատարվող հետաքրքիր դիմում, լուսանկար, քաղվածք աշխատանքային գրքույկից, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, հրատարակված աշխատանքների ցանկ, անձնագրի պատճեն, տեղեկանք մշտական բնակության վայրից, բնութագիր վերջին աշխատավայրից (աշխատանքային փորձ ունենալու դեպքում):

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորիչ 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24բ,

հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 21.02.2019 թ.:

"ГИТУИОН" ("Найка") газета НАН РА